

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Դաւիթ
Թագաւորը
(մասն 2)



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Տէյվիտ Ճուտայի թագաւորն
Էր, հարաւային
Պաղեստին,
...



... բայց
մնացեալ
հարայելը
հշպոշեթը
Սառլի
որդին
առին իբր
թագաւոր:




Եօթը տարի ներքին պատերազմ
բարձրացաւ:
Բայց Ռաւիթ
աւելի կը
զօրանար:



Վերջապես Իշպոշէթ
թագաւորը
սպաննուեցաւ
իր երկու
զինուորներուն
ձեռքով:




Յետոյ բոլոր Իսրայելի տոհմերը
եկան Դաւիթի եւ զինք թագաւոր
օծեցին ամբողջ
Իսրայելի
վրայ:




Վերջապես Դավիթ թագաւոր եղաւ
բոլոր երկրին վրայ:




Առաջին գործը, որ Ռաբիթ թագաւոր
ըրաւ Երուսաղէմը գրաւեց:




Այդ քաղաքը ճանչցուեցաւ իբր
Դաւիթի քաղաքը: Ան քաղաքը
ամուր ձեւով վերակառուցեց
թշնամիներուն դէմ:




Երուսաղեմէն ետք Դաւիթի
բանակը գնաց գրաւելու համար
Պաղեստինը եւ ուրիշ թշնամիներ
հարայելի:




Յաջորդ գործը՝
Դաւիթ թագաւոր
Աստուծոյ,
Տապանը
Երուսաղէմ
բերաւ:




Աստուծոյ Տապանը
կը պարունակէր
տասը ...



... պատուիրաններն
օրհնակներ եւ
ուրիշ օրէնքներ,
որ Աստուած
տուած էր
Մոսէսին:



Իսրայելացիներուն
կը յիշեցներ, թէ
Աստուած սուրբ
է եւ իրենք
պետք է իրեն
հնազանդէին:




Դաւիթ պետք էր շատ
մը պատերազմներ
մղեր իր
թագաւորութեան
առաջին
տարիներուն:



Ան իւելացի
զինուոր եւ
խոնարի մարդ մըն
էր, որ Աստուծոյ
ցուցմունքին
համար կ'աղօթէր:





Ան շատ նեղուած
էր որ ինք
գեղեցիկ
տան մէջ
կ'ապրի եւ
տակաւին
Աստուծոյ
տապանը
վրանի
տակ է:



Դավիթ որոշեց
տաճար մը
շինել Նաթան
Աստուծոյ
մարգարէն
քաջալերեց
զինք:





Այդ երեկոյ,
Աստուած լուր
ըրկեց Դաւիթի. "Իմ ծառաս Դաւիթ
Տերը քեզի տուն պիտի կառուցէ:





Երբ քու
օրերդ
վերջանան

Եւ հանգստութեան կոչուիս
քու հայրերուդ հետ, ես քու որդիդ
թագաւոր պիտի նշանակեմ:





Ան իմ
անունիս
համար
տուն մը պիտի

կառուցէ եւ ես իր թագաւորութեան
գահը յաւիտեան պիտի հիմնեմ”:



Դաւիթ ուզեց Սառայի ընտանիքէն
ողջերուն օգնել: Ան միայն
ճոնաթանի տղան
Մէֆիպոշէթը
գտաւ, որ
հաշմանդամ
էր:




"Ան պիտի սեղանակիցս դառնայ
ինչպէս թագաւորին բոլոր
տղաքը", ըսաւ
Դաւիթ:




Դաւիթ շատ լաւ էր Մէֆիպոշէթի
հետ, որովհետեւ ճոնաթան
իր ամենալաւ
բարեկամն էր:





Այնքան ատեն որ
Դաւիթ կը վստահէր
Աստուծոյ եւ Անոր
կ'ենթարկուէր,
Աստուած կ'օգնէր
զինք, որ աւելի
բարգաւաճի:





Սակայն օր մը,
սոսկալի շուք մը
իջաւ Դաւիթի
կեանքին վրայ: Ան
իր բանակը դրկեց
կռուելու եւ ինք
մնաց Երուսաղէմ:







Երեկոյ մը
ան չէր կրնար
քնանալ: Տանիք
ելաւ եւ վերէն
դիտեց քաղաքը:




Դաւիթ տեսաւ
գեղեցիկ կին մը,
որ լոգանք կ'առնէ:
Անոր անունը
Պաթշեպա էր:



Դաւիթ մեղք
գործեց անոր հետ,
հակառակ անոր
ամուսինը, Յուրիա,
Դաւիթի քաջարի
զինուորներէն
մէկն էր:



Երբ կինը ըսաւ
Դաւիթի, որ իրմէ
զաւակ կը սպասէ:
Դաւիթ գիտցաւ,
որ մեղքը աւելի
խնդիրներ պիտի
ստեղծէ:





Աստուծոյ
խոստովանելու
տեղ, Դաւիթ փորձեց իր մեղքը
ծածկել: Բայց այդ չի յաջողիր:





Ան Յուրիան
պատերազմի դաշտեն տուն
կանչեց, յուսալով, որ Յուրիա
կարծէ, թէ մանուկը իրմէ է, ...






... Բայց Յուդիան չէր ուզեր մնալ
երբ իր ընկերները պատերազմի
դաշտը կը կռուէին:





Յուդիա թագաւորին տան
դրան առջեւ քնացաւ:



Ուրեմն Դաւիթ
աւելի գէշ բան
մը ըրաւ: Ան
Յուրիան ետ
պատերազմի
դաշտ դրկեց
եւ հետը
նամակոյ մը:



Նամակը
սպարապետին
կ'ըսեր, թե
Յուդիան
պետք էր
պատերազմի
դաշտին վրայ
մեռներ:



Երբ Յուդիան
մեռաւ, Դաւիթ
Պաթշիպան
առաւ իբր
իւր կինը:





Աստուած
իր ծառան
Նաթանը
դրկեց
Դաւիթի
ցոյց տալու
համար իր
գործած
մեղքը:



Նաթան պատմեց Դավիթի
պատմութիւն մը հարուստ
մարդու մը մասին
եւ աղքատ
մարդու մը
մասին:



Հարուստ մարդը հարիւրներով
ոչխարներ ուներ: Բայց աղքատ
մարդը միայն մէկ
գառնուկ ուներ,
որուն իր
աղջկան պէս
կը սիրէր:



Երբ ճամբորդ մը եկաւ հարուստ
մարդուն քով ան իր ոչխարներէն
չմորթեց, այլ մորթեց աղքատ
մարդուն գառնուկը:






Դաւիթ շատ զայրացաւ
հարուստ մարդուն
անձնասիրութենէն:
Ան պոռաց. "Այն
մարդը, որ այս
արարքը կատարած
է պէտք է անշուշտ
մեռնի":



"Դո՛ւն ես այդ մարդը" ... Նաթան
ըսաւ Դաւիթի:



Դաւիթ ինչ որ ըրաւ աւելի գէշ էր ան
ինչ որ պատմութեան մէջի մարդը
ըրած էր:



Աստուած Դաւիթի ցոյց տուաւ
իր չարութիւնը եւ
Դաւիթ շատ կը
զղջար իր
գործած
մեղքին
համար:



Ան Աստուծոյ
ըսաւ. "Քու դէմդ ես
մեղք գործեցի եւ
գէշութիւն ըրի եւ
Աստուած ներեց
Դաւիթի
մեղքը:"



Բայց Պաթշիպայի
զաւակը շատ
հիւանդացաւ
եւ ծնելէն
անմիջապէս
ետք մեռաւ:





Աստուած ներեց
Դաւիթի ահռելի
մեղքը: Յետոյ
Պաթշիպա ուրիշ
զաւակ մը ունեցաւ
Սողոմոն, որ պիտի
ըլլար հզօր
թագաւոր
Դաւիթէն
յետոյ:



Բայց Դավիթ թագաւոր ուրիշ
զաւակներ ալ ուներ, որոնցմէ
մի քանին շատ մեծ
դժբախտութիւններու
պատճառ դարձան:



Դաւիթ թագաւորը (մասն 2)

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

2 Սամուէլ 1-12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

